ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ ՄԱՐԱԼ ՄԻՍԵԱՆ

Շար.Պ՝ էջ 6

ՉԵՐ ԱՌՕՐԵԱՆ ԴԻԻՐԱՅՆՈՂ ՀՆԱՐՔՆԵՐ

Արդուկին այրած յատակը մաքրելու համար կարելի է օգտագործել սոտան կամ քացախը: Առաջին ձևը. 2 ապուրի դգալ սոտային քիչ մը ջուր անելցնել թանձրուկ մը ստանալու համար: Արդուկը քիչ մը տաքցնել, գաղը արդուկին յատակին տարածել սոտայի թանձրուկը, սպասել 5-7 վայրկեան, ապա շփելով մաքրել այրուածքի հետքը, թերթով կամ թուղթ անձեռոցով:



Երկրորդ ձևը. «թեֆլոն» յատակով արդուկի պարագային, լաթի մը վրայ առատ ճերմակ քացախ տարածել եւ արդուկին այրած հատուածը շփել, միևնույնի որ արատը ամբողջովին անհետանայ: Ապա յատակը մաքրել փափուկ չոր լաթով մը:

ՁՈՒՐԻ 3-5 լիթրանոց կայունները կարելի է օգտագործել սոխ, սխտոր, գետնախնձոր պահելու համար: Աննել ջուրի պարագայ կայունը, տաքցուած դանակի շեղբի մը միջոցով բացուածք մը բանալ, բա-



ցուածքէն շուրջը խժժերիզով (շարթթոն) պաշտպանել՝ ձեռքը չվիրարելու համար: Տաքցուած շամփուրի մը միջոցով կայունին չորս կողմը ծակտիկներ բանալ, որպէսզի օդ բանի եւ, վերջապէս, տեղաւորել սխտորը, սոխը, գետնախնձորը եւ այլն...:

ԽՈՂԱՆՈՅԻ պահարանները ժամանակի ընթացքին կը կորսնցնեն իրենց նախկին տեսքն ու փայլքը՝ փոշիի, իւղի կուտակումի պատճառով: Մաքրելու միջոցը շատ պարզ է, խորունկ ամանի մը մէջ խառնել երկու ապուրի դգալ պնակեղէնի հեղուկ



օճառ, երկու բաժակ տաք ջուր եւ մէկ բաժակ ճերմակ քացախ: Սպունգին կարծր երեսով այս խառնուրդը տարածել պահարաններուն մակերեսին շփել: Կարգ մը քարացած աղտերու համար կարելի է ակնայի հին խոզանակ մը օգտագործել:

ՏԱԿՈՂՈՅԻ սեւցած, այրած տապակը մաքրելու համար անհրաժեշտ է մեծ կերպընկալ տոպրակ մը, մէկ գաւաթ փեփսի թուլա, երկու ապուրի դգալ սոտա, երկու ապուրի դգալ պնակեղէնի հեղուկ օճառ, 1 ապուրի դգալ աղ:



Վերը յիշուած բաղադրիչները խառնել եւ ստացուած թանձրուկով ծեփել տապակը, ապա գայն տեղաւորել կերպընկալ տապակին մէջ: Թանձրուկին մնացորդացը լեցնել տոպրակին մէջ, բերանը լաւ փակել եւ ձգել 1-2 ժամ:


Տապակը տոպրակէն հանել եւ լուալ, կարգ մը արատներու պարագային օգտագործել մետաղեայ կամ կարծր սպունգ մը:

ՅԱՆՎԻԹԻՆ թարմութիւնը ստուգելու համար կայ շատ պարզ եւ արագ միջոց մը:

Հաւկիթը դրեք ջուրով լեցուն բաժակի մը մէջ: Ա.- Եթէ անիկա յատակին մնայ, կը նշանակէ, որ թարմ է:

Բ.- Եթէ անիկա բաժակին յատակէն վեր է, բայց ջուրին երեսը չէ բարձրացած, կը նշանակէ, որ սահմանի վրայ է, եւ պէտք է շուտով սպառել:

Գ.- Եթէ հաւկիթը արդէն մասամբ կը ծիւսայ եւ ջուրէն վեր բարձրացած է, կը նշանակէ, որ հին է եւ պէտք է թափել:



ԿԻՆ ԴԵՍԵՐ

ՍՈՆԱ ՉԵՅԹԼԵԱՆ



Վերջերս Կլենտէյի մէջ պատուուեցաւ դաստիարակ, ազգագրագետ, պատմաբան, մրցանակակիր հեղինակ, հայ կիններու պատմութեան եւ իրատեմքներու ջատագով Սոնա Չեյթլեանը՝ իր 70 տարիներու ծառայութեան համար, ԶՕՄ-ի եւ Զամագգայիկի հայ կրթական եւ մշակութային միութեան կերտական վարչութիւններուն կողմէ:

Սոնա Սիմոնեան-Չեյթլեան ծնած է Եգիպտոս, վկայուած է տեղական Ամերիկեան կամալսարանէն եւ Նուիթուած ուսուցչական ասպարեզին՝ Նախ Գահիրէի, ապա Պէյրութի ազգային վարժարաններուն մէջ:

Սոնա Չեյթլեանի առաջին ուսումնասիրութիւնը՝ «Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ», «Գեորգ Մելիտիսեցի» գրական մրցանակին արժանացաւ 1968-ին: Իսկ 1973-ին լոյս տեսաւ անոր «Մուսա Էրան ժողովրդական հեջիաթները», որ իբրեւ բերանացի պատում՝ անձամբ հաւաքած է Լիբանանի Այնճար գիւղը բնակող մուսալեցիներէն: 80-ական թուականներուն յաջորդաբար իրատարակուեցան արաբական մեր պատմութեան հերոսներուն կեանքն ու գործը վիպակի ձեւով Ներկայացնող իր չորս հատորները՝ «Արի արանց» ընդհանուր խորագրին տակ:

Հայ կնոջ գործունեութիւնը լիովին արժեւորելու իր մնայուն հետաքրքրութեան արգասիքն է «Հայ կնոջ կեանքի ուղիին հետքերով» ուսումնասիրութիւնը, որ կ'ընդգրկէ հայ կնոջ ներդրումը մեր ազգային կեանքի տարբեր փուլերուն: Սոնա Չեյթլեան այժմ կը բնակի Լոս Անճելէս, իր չորս զաւակներուն հետ:

«... Ան նպատակային պատմաբանութիւն կատարեց հայ կնոջ դեկլարիւրներին, բան մը, որ իրմէ առաջ չէր կատարուած: Ան կիններու ուսումնասիրութեան մարզի հիմնադիր ճահիլիրան է՝ կինները ներկայացնելով իբրեւ յառաջդիմութեան ու փոփոխութեան գործիչներ: Ան արձանագրած է հայ կնոջ նպաստը՝ սեռերու հասարակութեան եւ ընկերային արդարութեան միջազգային հաստատման մէջ...»:

ՀԻՐԱԿՆԱ ՉԵՅԹԼԵԱՆ

ՕԳՏԱԿԱՐ ԲՈՅՄԵՐ

ՏԱՆ ՓՈՇԻՆ ԿԼԱՆՈՂ ԲՈՅՄԵՐ

Տնային բոյսերը չեն դադիր մեզ զարմացնել: Իսկապէս, որոշ տնային բոյսեր գուտ տան զարդեր չեն, անոնք ուրիշ արժանիքներ ալ ունին: Օրինակ՝ իմացե՞ր էիք, որ կարգ մը բոյսեր կրնան շրջակայ միջավայրի օդը մաքրել եւ միևնույն իսկ որոշ չափով կլանել տան փոշին:

Եթէ նկատեք, որ փոշին նստած է որոշ բոյսերու վրայ, պատճառը այն է, որ տուեալ բոյսերը բարձրացուած են շրջակայ միջավայրի խոնաւութեան մակարդակը եւ, այսպիսով, փոշին նստած է անոնց տերեւներու մակերեսին:

Ստորեւ՝ 3 բոյսեր, որոնք տան փոշին կլանելու յատկութիւն ունին:

1.- «ԶՈՒՉՈՒՔ» կամ «ՖԻԺԻՄ ԵԼԱՍԹԻԶԱ»-ն կը յատկանշուի իր մութ կանաչ գոյնի, մեծ, փայլուն տերեւներով: Անիկա ունի սենեակին խոնաւութիւնը բարձրացնելու առանձնապատկութիւն: Անոր մեծ, լայն եւ տոկոսն տերեւները շատ արդիւնաւետ են փոշին կլանելու, բայց նաեւ՝ ապակեանած օդը թունաւոր նիւթեր ձերբազատելու համար:



2.- «ՖԻԺԻՄ ՊԵՆՏԱՄԻՆԱ»-ն, որ նաեւ լացող թզենի անունով ծանօթ է, մեծ խնամքի չկարոտող եւ տարբեր միջավայրերու յարմարելու յատկութիւնը ունի:

Տան մէջ պահուող, փոքրիկ տերեւներով, բայց շատ դիմացկուն այս բոյսը կը բարելաւ սենեակին խոնաւութեան մակարդակը ու կը կլանէ փոշին:



3.- «ՓՈՌՈՍ»-ը շատ քրտնող բոյս է. ջուրի այս գոլորշիացումը կը բարձրացնէ սենեակի խոնաւութեան մակարդակը: Այս արեւադարձային բոյսը կըրտնայ ունեալ կախով կամ մազլոցով տեսք: Փոթոսը նաեւ շրջակայ օդի թունաւոր նիւթերը կլանելու յատկութիւն ունի, ինչպիսիք են՝ ածխածնի օքսիտը քսիլենը, պենտենը եւ այլն...:

Փոթոսը եւս մեծ խնամքի չի կարոտիր, չարքաշ է եւ յարմարող:



ՇԱՐԹՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՐՈՒԹԻՒՆ

Ես ձեզ ասում եմ՝ կը գայ Ոգու սով, եւ դուք կը քաղցեք ճոխ սեղանի մօտ, Կ'ընկնէք մուրալու յափրած որկորով՝ Զրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ:

Լրբենի ծաղրով արհամարհեցիք Ոգու վառ գեղմունք միտք ու երազանք, Նիւթի տաճարում արքած պարեցիք՝ Մոռացած անմահ, անիւնի տեսչանք:

Դուք, որ հեզկեցիք ուժն ստեղծագործ՝ Ձեր նիւթի հանդէպ կը գայ ոգու սով. Եւ մուրացկի պէս փշրանքի համար Շարու ու Նօթի կ'անցնէք ծովից ծով:

ԱՄԵՏԻԵ ԻՍԱԿՅԱԿԵԱՆ

ԳԻՏԵ՞Ք, ԹԵ...

- Մարդու գլխու վրայ կ'աճի 90-150 հազար մազ: - Մեր մորթին 90 առ հարիւրը ծածկուած է մազերով:



- Երեխային առաջին աղուամազերը կը յայտնուին մօր յղութեան 4-րդ կամ 5-րդ ամսուան ընթացքին: - Ամենէն արագ կ'աճին 15-30 տարեկաններու մազերը: 50-էն ետք մազերու աճը կը դանդաղի:



- Մազերը ամրան անելի արագ կ'աճին, քան՝ ծմբան: - Կինները հազուադէպօրէն ճաղատ կը դառնան, քանի որ անոնց մազերուն արմատները մորթին մէջ 2 մմ անելի խոր կը գտնուին, քան՝ տղամարդոցը:

- Տարուէ տարի մազերը կը նորոգուին: Մարդ օրական կը կորսնցնէ 60-100 մազ:

- Շիկակարմրահերերը ունին ամենէն խիտ մազերը: - Սեւամորթներուն մազերը ամենահաստն են. անոնք կրնան միևնույն 8 անգամ անելի հաստ ըլլալ բաց գոյնի մազերէն:

- Ծարպտու մազերը անհրաժեշտ է անելի յաճախակի լուալ քան՝ չորս կամ բնականոն մազերը: Լուալու համար ամենալաւը 40-45 ցերմաստիճանի ջուրն է: Թելադրելի է հերթափոխութեան պարագային գործածել խոր ակոսներով սանուորները:

- Օրական մազերը միջին չափով կ'աճին 0,33 մմ տարեկան՝ 12 սմ: Եթէ մեքէ մեր մազերը չկտրենք, կեանքի վերջաւորութեան կ'ունենանք մօտ 7,5 - 8 մետր մազ:

- Մազերու կեանքի տեւողութիւնը միջին հաշուով 2-էն 7 տարի է: - Ծերմակ մազերը անելի փխրուն են, քան՝ գունաւոր մազերը:

- Մարդու ապրելակերպը կ'ազդէ մազերու առողջութեան վրայ: Այսպէս, ոչ հաւասարակշռուած սննդակարգը, ընկճախտը, ջրազրկումը, անբաւարար քունը եւ ծխախոտի չարաշահումը անէր վրէժ գործեն:

- Մազերու առողջութիւնն ու փայլքը պահպանելու համար պէտք է հրաժարիլ գանոնց օրական լուալէ, ելեկտրական տաք սարքեր օգտագործել եւ բաշուած ու պրկուած յարդարանքներ որդեգրել: - Առողջ մազեր ունենալու համար պէտք է ուտել ՊՇ. խումբի կենսասիւթերով հարուստ սնունդներ՝ միս, հաւկիթ, ձուկ, ծովային պտուղներ, ամբողջական հացահատիկներ, եւ այլն...:

Չինկով հարուստ սնունդները ինչպէս ընկոյզը, ծլած ցորենը, սեւ տուրմը, կովու միսը, լեարդը նոյնպէս կ'ապահովեն մազերուն աճը եւ առողջ տեսքը: Թթխմորը նոյնպէս կը գորացնէ մազերուն արմատները ու խթանէ անոնց աճը:

ԽՈՂԱԳԻՐ

ԿԻՏՐՈՆՈՎ ՅՈՒՆԱԿԱՆ ԵՂԻՆՁ

Բաղադրիչներ

- 2 ապուրի դգալ ծիւսպտուղի ձեթ
- 1 փոքրիկ սոխ՝ մանր կըտրատուած
- 2 պճեղ մանր կըտրատուած սխտոր



- 1,5 գաւաթ բրինձ
- 3 գաւաթ հաւու արգանակ
- 2 ապուրի դգալ մանրուած ազատքեղ
- 1 ապուրի դգալ մանրուած թարմ սամիթ, կամ՝ 1 թէյի դգալ չոր սամիթ
- 1 կիտրոնի հիւթ եւ կեղեկ տաշուք
- Աղ, սեւ համեմ

Պատրաստութիւն

Բրինձը հոսող ջուրի տակ լաւ լուալ, ապա 15-20 վայրկեան թոջել պաղ ջուրի մէջ, յետոյ քամոց անցնել:

Կաթսային մէջ տաքցնել ձեթը, անելցնել մանրուած սոխը, միևնույնի որ կիսաթափանց դառնայ, յետոյ անելցնել սխտորը եւ վերջապէս՝ բրինձը: Բոլորը միատեղ խառնել, որպէսզի բրինձը թթօն տապկուի:

Հաւու արգանակը անելցնել խառնուրդին վրայ, եւ երբ եռման աստիճանի հասնի, կրակը թթօնցնել, կաթսային կափարիչը փակել եւ եփել, միևնույնի որ բրինձը եփի եւ հեղուկը ներծծուի:

Կաթսան կրակին վրայէն հանել, անելցնել ազատքեղը, սամիթը, կիտրոնի հիւթն ու տաշուքը: Պատառաքաղի ծաղրով բրինձը թթօն խառնել, աղել, համեմել եւ ներկայանալի ամանի մը մէջ մատուցել՝ կիտրոնի շերտերով զարդարելով:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱԿԻՍԱԿԵԱՆ

ԼԵՆԱԼԻԲԱՆՆԻ ԳԵՐԲԱԺԱԿ

ԱՅՍ ԿԻՐԱԿԻ՝ ԶՍԸՄ ՊՈՒՐՃ ԶԱՄՈՒՏ - ԶԻԼԱԼ ՆԱՍՐ

Այս կիրակի յետմիջօրեի ժամը 16:00-ին, Պիամուտի «Ամին Ապտեյ Լուր» դաշտին վրայ տեղի պիտի ունենայ 2023-2024 տարեշրջանի Լեռնալիբանանի գերբաժակի մրցումը՝ ախոյեան ՅՍԸՄ Պուրճ Զամուտի և բաժակակիր Հիլալ Նասրի միջև:



Ախոյեան ՅՍԸՄ Պուրճ Զամուտ նախապես Հիլալ Նասրի դեմ ունեցած է մեկ մրցում, որուն ընթացքին վերջինս կրցած էր 1 կոլ նշանակել և յաղթել ՅՍԸՄ-ի տոհոց:

Այդ օր մեր տղաքը լաւ ելոյթ չէին կրցած ցուցաբերել: Այս կիրակի Հիլալ Նասր դաշտին վրայ պիտի տեսնեն ՅՍԸՄ-ի տոհոց իսկական մակարդակը:

Զամակիրներն են սպասուի խիտ շարքերով ներկայ գտնուիլ Պիամուտի եւ քաջալերել ՅՍԸՄ-ի տղաքը: Փոխադրակառքեր տրամադրուած են Պուրճ Զամուտի հրապարակէն, անոնք ժամը 14:30-էն սկսեալ դաշտ պիտի փոխադրեն համակիրները:

Տիտղոս մը ես աւելի կ'ամրապնդեմ ՅՍԸՄ Պուրճ Զամուտի տոհոց կամքը: Անոնք վերջին հանգրուանին պիտի մրցին Լիբանանի տարբեր շրջաններու լաւագոյն խումբերուն դէմ:

Հիւսիսային Լիբանանի շրջանէն Անսար Մաուատա, Վուլվա եւ Շեքքա հասած են աւարտական հանգըրան: Հարաւային Լիբանանի շրջանէն Շապպա Ատուլուն եւ Ամալ Մաարաբէ հասած են աւարտական հանգըրան: Կը մնայ յստակացնել Պեքայի 2 թելնածուները, ինչպէս նաեւ Ռապիթա Ռարտալիէ (Լեռնալիբանանի 4-րդ դիրքը գրաւած) - Արդ Պելրուպի 2-րդ դիրքը գրաւած) յաղթականը:

«ՖՈՐՄԱԻԼԱ-1»

Ո՞Վ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՄԵՐՍԵՏԵՍԻ ՎԱՐՈՐԴ



«Ֆորմուլա 1»-ի տարեշրջանը սկսաւ անցեալ ամիս, եւ 1950-էն ի վեր առաջին անգամ ըլլալով բոլոր խումբերն ալ (10 խումբ) իրենց անցեալ տարուան վարորդները պահած էին անփոփոխ: Միակ «ցնցիչ» լուրը 7 անգամ ախոյեան Լուիս Համիլթընի Ֆեռարիի խումբին միանալու լուրն էր յառաջիկայ տարեշրջանին:

2025-ին տարբեր պիտի ըլլայ ամէն ինչ: 12 վարորդներու պայմանագիրներ կ'աւարտին, եւ քուլիսներու ետին մեծ աշխատանք կը տարուի լաւագոյն վարորդներ ձեռք ձգելու: Մերսեդես Համիլթընը (39 տարեկան) փոխարինելու մասին կը մտածէ, մինչ խումբի տնօրէն Թորե Վոլֆ ճշումի տակ չէ: Աւստրիացին գիտէ, որ Մերսեդես միայն 3-րդ լաւագոյն ինքնաշարժն է, բայց ամէնէն պահանջուած գերմանական ընկերութիւնն է:

Վոլֆի մօտ 2 անուն կայ փոխարինելու Համիլթընը... Մաքս Վերշթափըն (26 տարեկան) եւ Ֆեռնանտո Ալոնսօ (42 տարեկան): Ասկա կը նշանակէ նաեւ, որ Սեպասթիան Ֆետթել (36 տարեկան) եւ Միք Շումսթրը (25 տարեկան), որոնք անունները վերջերս հրապարակուած էին իբրեւ Մերսեդեսի թեկնածու, յոյս չունին միանալու:

Վոլֆ չի թաքցնէ իր նախընտրութիւնը: Ան Սեուտական Արաբիոյ կրան փորձէ ետք յայտնած էր, թէ անշուշտ կ'ուզէ ունենալ Մաքսը խումբին մէջ: Նետերլանտցի վարորդ Մաքս Վերշթափըն, որ վերջին 3 տարիներուն աշխարհի ախոյեան դարձաւ, Ռետ Պուլի հետ պայմանագրութիւն ունի մինչեւ 2028, սակայն ան կրնայ կիսատ ձգել իր պայմանագրութիւնը, որոշ մը վճարելով, կամ թէ տոքթ. Հելմուտ Մարքո (80 տարեկան) մաս չկազմէ Ռետ Պուլի այլեւս: Այս մէկը հեռու կրնայ չլլալ, մանաւանդ որ Ռետ Պուլ վերջերս դիրքերու ներքին պայքարի մէջ կը գտնուի:

Այնուս երկրորդ թեկնածու է Ծորճ Ռասըլի կողքին (26 տարեկան): 42 տարեկան Ալոնսօ, որ 2005-ին եւ 2006-ին աշխարհի ախոյեան դար-

ձած էր, իր ասպարեզի վերջին օրերուն մէջ կը գտնուի, սակայն տակաւին ամէնէն արագ վարորդներն են: Մերսեդեսի պատասխանատուներ շատ լաւ գիտեն, թէ Ալոնսօ որքան կ'օգնէ իր խումբին բարելաման աշխատանքին, ինչպէս պատահեցաւ Ալֆրիդի Եւսթիան Մարթինի յառաջդիմութեան ժամանակ: Այս յատկութիւններուն պէտք ունի Մերսեդես 3 տարի տառապելէ ետք:

Ռետ Պուլի պարագային հակառակ ներքին պայքարներուն բոլորը կը նախատեսեն, որ Վերշթափըն մնայ աւստրիական խումբին հետ: Սակայն Փերթի պարագային (34 տարեկան) պայմանագրութիւնը երկարաձգելը շատ հաւանական չէ, եւ մեքսիքացի վարորդ միշտ չ'արդարացներ իր վրայ դրուած յոյսերը: Ամէնէն հաւանական թեկնածուն, եթէ Փերթս լքէ, Ալեքսանտր Ալպոնն է (27 տարեկան), որ Վերշթափընի խմբակիցն էր Ռետ Պուլի մէջ 2019-էն 2020: Այդ օրերուն, Վերշթափընի հետ չէր կրնար մրցիլ Ալպոն, սակայն Ուիլիամսի հետ շատ աւելի ինքնավստահ վարորդ մը դառնալով իր խումբի 28 կետերէն 27-ն շահեցաւ անցեալ տարեշրջանին: Ամէն ինչէ անկախ, Ալպոն Չալերմ եուվիտիայի (73 տարեկան) երազային լուծումն է: Թայլանտցի միլիոնատէրը Ռետ Պուլի ամէնէն մեծ բաժինը ունի իր ընտանիքին հետ միասին, եւ պիտի ուզէ իր ազգակից Ալպոնի ներկայութիւնը խումբին հետ: Ուիլիամսի հետ 2025-ին աւարտելով իր պայմանագրութիւնը, Ալպոն կրնայ դուրս թելնածու մը ըլլալ: Ռետ Պուլ կը հետեւի նաեւ Մաքլարենի գոյգին՝ Լանտո Նորիսի (24 տարեկան) եւ Օքթաֆ Փիասթրիի (22 տարեկան), որոնք հակառակ անոր որ երկար պայմանագրութիւններ ունին Մաքլարենի հետ, անոնք կիսատ ձգելու կարելիութիւնը ունին, եթէ Մաքլարեն լաւ արդիւնք չարձանագրէ:

Նշենք, որ այս շաբաթավերջին Շանկիայի միջազգային շրջակագրին վրայ տեղի պիտի ունենայ այս տարուան 5-րդ կրան փրին՝ Չինաստանի կրան փրին:

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ԼԵՔՐՈՂ 7-ՐԴ ԴԻՐՔԸ ԳՐԱՒԵՑ ՓԵԼԻՔՆԸՆԸ - ՔԻՆԿԸ՝ 8-ՐԴ ԴԻՐՔԻ ՊԱՅՔԱՐ

Երէկ առաւօտեան ժամերուն «ԷՆ. ՊԻ. ԷՅ.»-ի սիրահարները ականատես եղան գեղեցիկ հետաքրքրական մրցումի մը, որուն ընթացքին Լուս Անճելըս Լեյքըրը կրցաւ յաղթել Նիւ Օրլինզ Փելիքընզի, վերջինիս դաշտին վրայ, 110-106 արդիւնքով:

Կիրակի օրուան յաղթանակը (124-108) կրկնելով՝ Լեյքըրը գրաւեց 7-րդ դիրքը, ուր Լոպպոն Ճեյմս 23 կետ, 9 ռիպաւստ եւ 9 էսիսթ կատարեց, իսկ Անթոնի Եյվին 20 կետ եւ 15 ռիպաւստ ձեռք ձգեց: Տ'Անճելօ Ռասըլ 21 կետ նշանակեց, մինչ Օսթըն Ռիվզ (16 կետ) եւ Ռոսի Հաշիմուրա (13 կետ) ամբողջացուցին Լեյքըրզի հնգեակը:

Լիւ Օրլինզի լաւագոյն մարզիկն էր Չայըն Ուիլիամսը, որ 40 կետ եւ 11 ռիպաւստ ձեռք ձգեց: Առանձին փայլելով Չայըն բաւարար օգնութիւն չըստացաւ իր խմբակիցներէն, որոնցմէ Թրէյ Մորֆի (12 կետ), Պրենտըն Իսկրամ (11 կետ) եւ Լերի Նեսս (10 կետ, 12 ռիպաւստ) նշանակեցին առաւելագոյն կետերը:

Խումբերու տարբերութիւնը 3 կետնոց կողովներու գծով էր, ուր Լեյքըրը 35 փորձերէն 14 յաջող 3 կետնոց կողովներ նշանակեց 40 հարիւր տոկոսով, մինչ Նիւ Օրլինզ 30 փորձերէն 9 յաջող 3 կետնոց կողովներ նշանակեց 30 առ հարիւր յաջողութեամբ: Նոյնիսկ ֆաուլներու ազատ հարուածներուն պարագային Լեյքըրը իր 29-էն 26-ը նշանակեց, մինչ Փելիքընզ 15-էն 11-ը կրցաւ նշանակել:

Լեյքըրը այս ձեռով հասաւ փլէյ-օֆի մրցումներուն եւ առաջին հանգրուանին պիտի մրցի անցեալ տարուան ախոյեան Տենիզը Նակեթցի դէմ, որ Արեւմտեան շրջանի 2-րդ դասուած խումբն է:

Երէկ 9-րդ դիրքը գրաւող Սաքրամենթօ Քինկզ հիւրընկալեց 10-րդ դիրքը գրաւող Կոլտըն Սթեյթ Ուորիորզ եւ 118-94 արդիւնքով պարտութեան մատնեց գայլ:



Քինկըն Սորոյէ 32 կետ նշանակեց (8 յաջող 3 կետնոց կողովներ)՝ ձեռք ձգելով 9 ռիպաւստ, մինչ Տո'Արոն Ֆրոջ 24 կետ աւելցուց ի նպաստ Սաքրամենթոյի: Տոմասթա Սապոնիա 16 կետ, 12 ռիպաւստ եւ 7 էսիսթ կատարեց ի նպաստ Քինկզի, որ այժմ պիտի մրցի Նիւ Օրլինզ Փելիքընզի դեմ՝ 8-րդ դիրքին համար:

Կոլտըն Սթեյթ իր լաւ օրերուն մէջ չէր, եւ Սթեֆըն Զորի 22 կետ կրցաւ նշանակել՝ կատարելով 6 թըրն օվըր: Իր 7 փորձերէն 3-ը կրցաւ նշանակել 3 կետնոց հարուածներէն, մինչ խմբակից Էլէյ Թոմփսըն 6 անյաջող 3 կետնոց հարուածներ փորձեց եւ առանց կետի աւարտեց, հակառակ անոր որ 31 վայրկեանէ աւելի մասնակցեցաւ:

Ճոնաթըն Զամիսկա 16 կետ աւելցուց, մինչ Էստրու Ուիլկընզ եւ Տրէյմըն Կրին 12-ական կետերով աւարտեցին Կոլտըն Սթեյթի այս եղանակը:

Այսօր Արեւելեան շրջանի փլէյ-ինի մրցումներուն, 7-րդ դիրքին համար կը մրցին Ֆիլադելֆիա 76-ըրզ եւ անցեալ տարուան փոխախոյեան Մայեմի Հիթ, մինչ միւս մրցումին 9-րդ դիրքը գրաւող Շիքսօ Պուլզ պիտի մրցի 10-րդ դիրքը գրաւող Աթլանթա Հորնետսի դէմ:

«ՉԵՄՓԻՆԸՆԸ ԼԻԿ»

ՊԱՐՍԵԼՈՆԱ ԵՒ ԱԹԼԵԹԻՔՕ ՄԱՏՐԻՏ ԴՈՒՐՍ ՄԱՅԻՆ

Երեքշաբթի գիշեր, Պարսելոնա իր դաշտին վրայ շատ լաւ ձեռով սկսաւ Փարիզ Սեն Ժերմենի դեմ, եւ շաբաթ մը առաջ 3-2 արդիւնքով յաղթանակ արձանագրած Պարսա կրցաւ 12-րդ վայրկեանին բաժակ մրցումի հաշիւը, երբ Լամին Եամալ լաւ ձեռով խաբեց Նուս Ալեխանդը եւ աշ կողմէն ֆրանսական քառակուսին մտնելէ ետք վերջին վայրկեանին փոխանցեց Ռաֆինիային, որ նշանակեց Պարսայի առաջին կոլը:

Այս կողմէն ետք, Պարսելոնա առիթ մը փախցուց, երբ Լեվանդոսկի չկրցաւ նշանակել 2-րդ կոլ մը:

29-րդ վայրկեանին Ռոնալտ Արաուխօ գետին բերաւ Փարիզեան խումբին ձախ յառաջապահ Պրատի Պարքուլան եւ կարմիր ջարտ ստացաւ: Արաուխօ վերջին պաշտպանը ըլլալով ստացաւ կարմիր ջարտ, բաժ մը, որ կատաղեցուց մարզիչ Չալին եւ Պարսելոնայի մարզիկները:

Հոս Չալի փոխարինեց Լամին Եամալը պաշտպան Ինյիլօ Մարթինսով, եւ Պարսելոնա, որ արդէն հակայարձակումներու վստահած էր, աւելի եւս պաշտպանել փորձեց, մինչ Սեն Ժերմեն մրցումի սկիզբէն կազմակերպուած ֆուլթայլ կը ցուցաբերէր:

40-րդ վայրկեանին, Պարքուլա, որ յաճախ կը յարձակէր ձախ կողմէն, կեդրոն փոխանցեց Էմպաֆիի ուղղութեամբ, սակայն գնդակը քիչ մը արագ ըլլալով ուղղուեցաւ աջ՝ Ռուման Տեմպելի, որ



վրայ հասաւ եւ գնդակը գետնոց իր նախկին ակումբին բերդին մէջ:

«Տաք» մրցումը շարունակուեցաւ, եւ օրուան ռումանացի իրաւարարը քիչ մը շատ խիտ էր դեղին ջարտ բաժնետու առումով: 40-րդ վայրկեանին Փարիզի կողմէն ետք, ան դեղին ջարտ տուաւ Էմպաֆիին եւ Ինյիլօ Մարթինսին: 5 վայրկեան ետք, Ֆապիան Ռուիս (Փարիզ Սեն Ժերմեն) դեղին ջարտ մը ստացաւ կիսախաղէն քիչ առաջ:

Բ. կիսախաղին, Ռոպերթ Լեվանտովսկի գլխու հարուածի համար կը ցատկէր, երբ մրցակիցի մը հետ գետին ինկաւ եւ... դեղին ջարտ լեծ յառաջապահին:

54-րդ վայրկեանին, Արնաո Գոլասի փոխանցումէն ետք, Փարիզի միջնապահ Վիթինիա գորաւոր հարուածով մը նշանակեց Սեն Ժերմենի 2-րդ կոլը՝ հաւասարեցնելով մրցումներու հաշիւը (4-4): 7 վայրկեան ետք, Փրաօ Զանսելօ կոշտ թաքցրի ենթարկեց Տեմպելին եւ փենալթի ի նպաստ Սեն Ժերմենի: Էմպաֆի անզսպելի հարուածով մը նշանակեց 3-րդ կոլը: Պարսելոնա փորձեց փոխադարձել՝ մրցումը երկարաձգման տանելու, սակայն Էմպաֆի ներկայ էր ճիշդ դիրքի վրայ, երբ յարձակում մը 2 անգամ զսպուլէ ետք Պարսայի բերդապահ Թեյ Շեթըրլին կողմէ, գնդակը հասաւ իրեն, եւ ֆրանսացի աստղը ամենայն դիւրութեամբ գնդակը գետն-



դեց Պարսայի բերդին մէջ, նշանակելով 4-րդ կոլը:

«Շատ հպարտ կը զգամ, մարզիկները իրենց ներկայութիւնը փաստեցին եւ կամքը ունէին անպայման յաղթելու: Յոյ՞ տուի՞նք ինչ որ կ'ուզէինք ընել հոս. կոլ ստացանք, բայց մեր տրամադրութիւնը տոյ՞ը մնաց եւ կեդրոնացումը չխախտեցաւ: Ամէն ինչ ըրինք, որ Պարսելոնայէն աւելի լաւ ըլլանք», ըսաւ Լուիս Էրիքսը, որ 2015-ին Պարսելոնայի հետ (իբրեւ մարզիչ) կրցած էր «Չեմփիընզ իլկ», «Լա իլկա» եւ Սպանիոյ բաժակը շահիլ:

«Բոլոր մարզիկներն ալ կը հաւատային, որ կըրնանք յաղթել: Չյանձնուեցանք: Գիտէիք, որ քանի մը կոլ պիտի նշանակեց: Շատ լաւ աշխատանք էր բոլոր մարզիկներէն: Մարզիչի թաքցնելը ամբողջական էի: Կոլ տանալէ ետք լաւ պայքար ցուցաբերեցինք: Կիսաւարտականի հասնիլը մեծ բան է: Յուսանք աւարտականին ալ հասնիլը: Պէտք է լաւ հանգստանանք», ըսաւ Տեմպել:

Կիսաւարտականի Փարիզ Սեն Ժերմեն պիտի մրցի Գերմանիոյ Պորուսիա Տորթմունտի դեմ, որ իր կարգին դուրս ձգեց այլ սպանական ակումբ մը՝ Աթլետիքօ Մատրիդը:

Առաջին կիսախաղին շատ լաւ ձեռով տիրապետելէ ետք Եուլիան Պրենտը (34-րդ) եւ Իան Սապօսըն (39-րդ վայրկեան) 2 կոլ նշանակեցին ի նպաստ Տորթմունտի, որ մեծ թիւով առիթներ կորսցուց:

Բ. կիսախաղին, Աթլետիքօ Մատրիդի մարզիչ Տիբո Սիմեոնէ 3 փոխանցումներ կատարեց, եւ սպանական ակումբը ճնշեց գերմանական խումբին վրայ: 49-րդ վայրկեանին Մաթթ Զոնմըլզ սխալմամբ իր բերդին մէջ նշանակեց կոլ մը ի նպաստ Աթլետիքոյի: Այս կոլը հաւասարեցուց 2 մրցումներու հաշիւը՝ 3-3-ի:

Երթին, Աթլետիքօ 2-1 արդիւնքով յաղթած էր, եւ 64-րդ վայրկեանին Անխել Թրեյա կրցաւ նշանակել մատրիդեան կազմի 25-րդ կոլը:

71-րդ վայրկեանին, Մարսել Սապիթթըրի երկար փոխանցումէն ետք, Նիքլաս Ֆիլլըրուկ գլխու հարուածով նշանակեց Տորթմունտի 3-րդ կոլը, իսկ իսկ 3 վայրկեան ետք, այս անգամ Ֆիլլըրուկի փոխանցումէն օգտուելով, Սապիթթըր գառակուսիին ծայրէն ռմբային հարուածով մը նշանակեց Տորթմունտի 4-րդ կոլը:

«Շատ գեղեցիկ ֆուլթայլի մրցում մըն էր բոլոր համակիրներուն համար, որոնք եկած էին Սիլկալ Իտուլա Փարք (81.365 համակիրներ): Առաջին կիսախաղը շատ լաւ ֆուլթայլ խաղցանք, 10 վայրկեանի չափ ժամանակի նայեցաւ Բ. կիսախաղի մթնոլորտին մէջ մտնելու. պէտք է ընդունիլք այս մէկը, բայց պատասխանը (Աթլետիքոյի կոլերուն) սքանչելի էր», ըսաւ Պրենտը:

Կիսաւարտականի երթի մրցումը տեղի պիտի ունենայ Տորթմունտի դաշտին վրայ, 30 ապրիլին, մինչ դարձի մրցումը տեղի կ'ունենայ 7 մայիսին՝ Փարիզի մէջ:

ԱՐԱՔԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՕՍԱՆԻ ՄԵՋ ԱՐՏԱԿԱՐԳ ԱՌԱՏՈՒԹԵԱՄԲ ԱՆՁՐԵՆԵՐ

Արաքական Միացեալ Էմիրութիւններու ազգային օդերեւութաբանական կեդրոնը յայտնեց, որ երեք-չարբթի օր երկրին մէջ վերջին 75 տարուան մէջ ամենէն առատ անձրեւները տեղացած են: Այս մասին կը յայտնէ Էմիրութեան կառավարութեան մամուլի ծառայութիւնը:



ջացած ողողումները պատճառեցին 18 գոհեր, որոնց շարքին 9 դպրոցականներ էն անոնց վարորդը:

Կեդրոնին տուեալներով՝ Ապու Տապիի Էմիրութեան արեւելքը գտնուող Այն Եւաթիին մէջ, ուր տեղակայուած է Արաքական Միացեալ Էմիրութիւններու կլիմայական եւ տեղեկատուական եղանակային կայանը, նուազ քան 24 ժամուան ընթացքին 254,8 միլիմետր անձրեւ տեղացած է:

«Երկիրը իր կլիմայական պատմութեան մէջ բացառիկ իրադարձութեան ակնատես եղած է», կը նշուի «Էքս»-ի վրայ հրատարակուած զեկուցումին մէջ:

Օսանի մէջ ամենէն շատ վնաս կրեց Շարքիտ շրջանը:

Անձրեւներ տեղացին նաեւ Պահրեյնի, Բաթարի եւ Սեուական Արաքիոյ մէջ:

Օսանի մէջ առատ անձրեւին պատճառով յառա-

ՊՈՐԵԼ ԲԼԱՎՐԸ ՈՒՉՊԵՔԻՍԱՆԻ ՄԵՋ ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԱԾ Է

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան բարձրագոյն յանձնակատար ճոզեփ Գորթեյ Զարաւայիս Կովկասի հարցերով յատուկ բանազնաց Թոյլո Ջլաարի թեկնածուները առաջարկած է Ուկրաինայի մէջ Եւրոպական Միութեան դեսպանի պաշտօնին: «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանը կը հարուրդէ, որ այս մասին կը յայտնէ գերատեսչութեան մամուլի ծառայութիւնը:



Կը հարուրդուի, որ Ջլաարի թեկնածուները պիտի հաստատուի Ուկրաինայի կառավարութեան պաշտօնական համաձայնութեանը:

Եւրոպացի դիւանագետ Ջլաար Զարաւայիս Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ նշանակուած է 2017 թուական:

Նին՝ այդ պաշտօնին փոխարինելով Զերայերթ Չալպերը:

ԲԸՐՊԻ. «ՊԱՅՏԸՆ Ո՞՞ ԻՐԱՆԻ ԶԵՏ...»

Շարունակուած Ա. Էջեն

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մեթիո Միլլըր յայտնեց, որ Իսրայել Իրանին պատասխան հարուած հասցնելու հարցը չէ ընկալուած Միացեալ Նահանգներու հետ:

Պատասխանելով լրագրողներու այն հարցումին, թէ արդեօք Իսրայել Միացեալ Նահանգներուն յայտնած է, թէ ի՞նչ քայլեր կը նախատես ձեռնարկել ի պատասխան Իրանի յարձակումին, Միլլըր ըսաւ. «Անոնք չեն յայտնած»:

Իսրայելի պաշտպանութեան նախարար Եոալ Կալանթար յայտարարեց, որ Իրան ձգտումներ կը ցուցնէ իր հզորութեան յարձակումին մէջ եւ պիտի չկարենայ Իսրայելը զսպել: «Ասիկա միջազգային գործընկերներու հետ մեր նախապատրաստութեան արդիւնքն է, ինչպէս նաեւ Իսրայելի պաշտպանութեան գործերու կարելիութիւնները», ըսաւ Կալանթար:

Իրանի նախագահ Իսրահիմ Ռաիսի յայտնեց. «Մեր դէմ Իսրայելեան որեւէ քայլ, նոյնիսկ եթէ սահմանափակ ըլլայ, ուժեղ եւ վճռական հակադարձութեան պիտի արժանանայ»:

«Իսրայելի դէմ մեր գիտութեան գործողութիւնները տապալեցին սիրնական գոյացութեան ուժը, եւ

մեր հակադարձութիւնը սերտուած ու ճշգրիտ էր», ըսաւ Ռաիսի՝ աւելցնելով. «Մեր հակադարձութիւնը Ուաշինկթընին եւ Իսրայելի աշակերտներուն իրագրելով էր, թէ մեր զինեալ ուժերը հզօր են եւ պատրաստ որեւէ սպառնալիք դիմակայելու»:

«Մեր զինեալ ուժերը ոչ միայն շրջանին մէջ, այլ՝ աշխարհի վրայ կարեւոր կարողականութիւններն են», ըսաւ Իրանի նախագահը՝ նշելով. «Շրջանին մէջ օտար ուժերու կարիքը չունիք, որովհետեւ շրջանի երկիրները կարող են անոր անվտանգութիւնը երաշխաւորել»:

«Շրջանի պետութիւններուն կ'ընենք, որ մեր ուժերը անվտանգութիւնն ու կայունութիւնը կ'ամրապնդեն, եւ պետք չէ սիրնական գոյացութեան վրայ վրաստահութիւն ունենալ», աւելցուց Ռաիսի:

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան յայտնեց. «13 ապրիլի գիշերը շրջանին մէջ շարունակուող մագլցումին եւ լարուածութեան հիմնական պատասխանատուները Նեթանիահուն ու անոր արհեստագործութիւնները են»: Ան նաեւ նշեց, որ Իսրայելի վարչապետը «կը փորձէ երկարաձգել պատերազմը՝ իշխանութեան վրայ մնալու համար»:

«Անոնք, որոնք ամիսներ շարունակ Կազայի դէմ պատերազմի հարցով լուռ մնացին, անմիջապէս դատապարտեցին Իրանի հակադարձութիւնը», երբ պետք էր Նեթանիահուն դատապարտել», ըսաւ Էրտողան:

Ան նշեց, որ «Իսրայել կը ջանայ շրջանային տագնապ յառաջացնել», եւ Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսարանին վրայ Իսրայելի յարձակումը «միջազգային օրէնքի եւ Վիեննայի համաձայնութեան ոտնահարում» կը նկատուի:

Էրտողան յայտնեց, որ Միջին Արեւելքի շրջանը «նոր լարուածութիւններով յղի է», թէ Կազայի մէջ անհրաւելութիւնն ու ջեղատարակութիւնը չդադրուի: Իսրայելեան լրատւամիջոցներ հարուրդեցին, որ 9 հրթիռներ «Նեւաթիմ»-ի մէջ շրջանացած են Իսրայելեան օդային պաշտպանութեան համակարգերը, եւ ոչ թէ Իսրայելեան բանակի բանբերին պնդածին նման 7-ը: Անոնք նաեւ անճիշտ որակեցին անոր այն պնդումը, թէ Իրանեան որեւէ անօդաչու թռչող սարք Իսրայելի օդային տարածք չէ մտած: Անոնք նշեցին, որ Իրանեան անօդաչու թռչող սարք մը Զերմուհի շրջան մուտք գործելով զայն հարուածած է:

ՔԱԹՈՐԻ ՎԱՐՉԱՊԵՏ «ԻՍՐԱՅԷԼԻ...»

Շարունակուած Ա. Էջեն

Ամերիկեան առաջարկը կը բաղկանայ 3 փուլերէ, որոնց շուրջ յունուարին Փարիզի մէջ ժողովի ընթացքին համաձայնութիւն գոյացուցած էին Եգիպտոսի, Միացեալ Նահանգներու եւ Իսրայելի գաղտնի սպասարկութիւններու ղեկավարներն ու Բաթարի վարչապետը:

Առաջարկը կը ներառէ 6 շաբթուան զինադադար, 40 իսրայելացի զինուորական զինուոր 800-էն 900 պաղեստինցի բանտարկեալներու ազատ արձակում, օրական սննդեղէնով բեռնարկուած 400-էն 500 բեռնակառքերու Կազա մուտք եւ գաղթականներու հիւսիսային Կազա տունդարձ:

«ՄՆԵՐԸ՝ ՆԵՐՇԵՉՄԱՆ ԱՂԲԻՐ...»

Շարունակուած 3-րդ Էջեն

Բայց եւ այնպէս հաւատքն ու կամքը յարգաւարտեցին թերահատուցեան եւ կորուզելու բառերու բոլոր փորձերուն: «Մեր Ջուլիանեան» աշակերտական շարադրական մրցանքը ստեղծուեցաւ եւ արդէն 20 տարեկան է այսօր: 20 տարի շարունակ կազմակերպուեցաւ այս մրցանքը. օրին քննադատողները, չհաւատացողները չկան արդէն: Գործին շարունակութիւնն ու յարատեւումը քրտն ու կը ջրէ ամէն բան:

Այս երեւոյթը նաեւ կը յուշէ, որ եթէ գործողներուն եւ գործունեութեան ճամբան քիչ մը անելի հակադիմաց էր ըլլալ, արգելք ղողները պահ մը մէկտեղ կենան ու արտօսեն, որ աշխատանքը շարունակուի, շատ անելի լալը կարելի է ընել ու յաջողութեան հասնիլ: Նշանակաւորութիւնը, խօսքերով, կարծիքներով չէ, որ բան մը կրնանք մեջտեղ բերել: Իրագործումներ կ'արձանագրուին գործով, մարդու՞ր համարմբով, ոչ թէ խրտչեցնելով, ոչ թէ ծնունդէն առաջ իսկ ձախող ւարարու տեսնելով, ծրագիրները կ'իրականանան գործը նորներուն փոխանցելով եւ անոնց վստահելով, ոչ թէ իրաքանչիւր նախաձեռնութեան մասին ըսելիք ու մտահանելիք ունենալով:

Բայց մը փոխեցին մեր կեանքին մէջ: Յամենայն դէպս, մտածումս եւ ըսելիքս այն է, որ իրաքանչիւր նախաձեռնութեան նկատմամբ նախատրամադրութիւններ չունենանք, չնայիսը ուղեւոր կ'անոր ետին ու՝ ըստ այնմ կարծիք արտայայտենք: Մենք մեր անձին հետ անկեղծ ըլլանք եւ փորձենք մեր կարելին ընել նեցուկ կանգնելու գործին, անոր յաջողութեան ու յարատեւման, եւ կամ պարզապէս չեզոք ըլլանք եւ ոչ թէ ժխտական տրամադրութիւն ստեղծող:

Նման նախաձեռնութիւններն են, որ հայ գաղութն ու դպրոցը կը պահեն: Նման նախաձեռնութիւններն են, որ հայը հայ՝ կը պահեն:

Վստահ եմ, որ 20 տարի շարունակ «Մեր Ջուլիանեան» աշակերտական շարադրական մրցանքին մասնակցած իրաքանչիւր աշակերտի մտքին ու հոգիին մէջ տեղ մը Մերին յիշատակը կ'ապրի, եւ անոր օրինակին ընդմէջէն այդ աշակերտները իրենք զիրենք անելի լալ հայ կը զգան՝ հպարտ, ազնիւ, համեստ, բայց վճռական:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿՈՄԻՏԵԱՍ ՄԱՍՆԱԾԻՐԸ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԸ ԸՆԹՐԻՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐ

Ուրբաթ 19 ապրիլին Նշան Փալանեան Կեդրոնէն կը կատարուի ժամը 8:30էն սկսեալ

Իրենց սիրայօժար մասնակցութիւնը կը բերեն Սալբի և Ճալի Թորիկեան:

ԱՊՐԱՀՈՎԵԼ ՀԵՐ 03 617955

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ Բ.Յ.Դ. «ԲԻՐԱՍԱՓՈՐ» ԿՈՄԻՏԵ

ԱՐՑԱՆԻ ԶԱՅՆԵՐ VOICES OF ARTSAXH

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՄՈՅԹ ԵՐԻՏԱՆՈՒՐԻ ՉԼՅՆԵՐ ԱՐՑԱՆԵՆ

Տեղի կ'ունենայ ուրբաթ 26, եւ շաբաթ 27 ապրիլ 2024-ի երեկոյեան ժամը 8:30-ին, «Յակոբ Տէր Մեղրունեան» թատերասրահին մէջ:

Տոմսերը ստանալ Զամազգայինի գրախանութէն՝ «Շաղոյեան» կեդրոն, ԱՅՖԻԼ-ի ԵՕԲ գրասենեակէն՝ «Արին» կեդրոն, եւ Երկրի օրը՝ սրահի կիշէն:

ՐԱԾՈՐ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00- Քայլերգներ	4.00- «Մուսկատարաթ» հիւրեր՝ Ռադիտա Եաշուհի, Նուէլ Շամուն եւ Ժիլի Ռէիս (ուղիղ՝ դիմատեսքով)
7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս	4.30- Օտար երգեր
7.15- Հանդարտ երգեր	5.00- «Վանայ Ձայն»-ը երեկոյեան
7.30- «Քարէն»	5.05- Ազգային երգեր եւ ասանկներ
8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	6.00- «Աշխարհի շուրջ» (Ալճերիա)
9.00- «Քարէն հարցազրոյց» հիւր՝ Ռաֆֆի Կելօլլանեան (ուղիղ՝ դիմատեսքով)	6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ
9.30- «Քարէն հարցազրոյց» հիւր՝ Թեմիստէ Մարտոյեան (ուղիղ՝ դիմատեսքով)	6.50- Հայութեան եւ Հայաստանին նուիրուած երգեր
10.00- «ԳՈՂԱՐ» համոյթի կատարումներ	7.00- «Հաւատք եւ կեանք» հիւր՝ Սարգիս Ա. Զեհլ. Սարգիսեան (կիւթ՝ «Մեղր եւ շուրիք» ուղիղ՝ դիմատեսքով)
10.30- Հայկական աշխարհի Լուրեր	8.00- Օրուան երգիչ (Կարապիտ Արիկեանի երգախումբ)
10.45- Ազգային ասումներ եւ եղանակներ	8.30- Juke Box
11.30- Խմբերգներ	9.00- Դասականներ
12.00- «Հայագիտակ» («Հայկական տարագի արմատները Վանի թագաւորութեան մէջ»)	9.30- Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
12.20- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ	9.45- Չուգերգներ
1.00- Ազգային-հայրենասիրական երգեր	10.30- Հայրենի սիրուած երգեր
1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ	12.00- «Յիշատակելիները» / Յեղափոխական երգեր
2.00- «Յիշատակելիները» (Շահան Նաթալի)	2.00- Նոր երգեր
2.05- Յեղափոխական երգեր	3.00- Կրկնութիւններ
3.00- «Քըլ Եոմ պիտմու» հիւր՝ Ռիմ Նաաուր (ուղիղ՝ դիմատեսքով)	5.00- Այլզգան երգեր
	6.00- Հայկական երաժշտութիւն

Չոր մնայուն ընկերակիցը **Radio Voice of Van: Live**

DOWNLOAD Google Play App Store